



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԳ. ՏԱՐԻ. ԹԻԻ 20.

1855

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գրեչեղիկոյ քաղաքին մատուան մը զանգակատանը փոխադրութիւնը :

Հին պատմութեան մէջ կը կար-
դանք թէ Օնոգորոս կեղտ արձա-
նագործը 'Երոնի հրամանաւ պղնձէ
100 ոտք բարձր արձան մը շինեց, որ
կայսեր Պալատին լերան վրայ ունեցած
պալատը պիտի երթար: Եւ չհսկայա-
կերպ արձանը գետնաշարժով մը կոր-
ծանուելով՝ Վեսպասիանոս կայսրը նո-
րոգել տուաւ զանիկայ ու Խաղաղու-
թեան տաճարին դիմաց փոխադրեց:
Եւ չեղբը Երբոր Բաբիանոս կայսրը այս
արձանին կեցած տեղւոյն վրայ ուզեց

Բստղկան ու Հռոմայ տաճար մը շինել,
հարկ եղաւ նորէն փոխադրել զանիկայ.
Վեմետրիանոս ճարտարապետը քսա-
նըչորս փղի կռնակին վրայ դրած՝ Վո-
լտէոնին դիմացը տանել տուաւ: Բայց
որովհետեւ պղնձէ էր այդ արձանը,
Հռոմայ աւարառութեանց մէկուն զոհ
եղաւ: Եւս փոխադրութենէն զատ՝
անկէ խիստ շատ ժամանակ վերջը Հռ-
ոմայ մէջ մարդկային արուեստով ան-
շունչ ձիերու արձաններ դէպ 'ի Վոն-
դէ-Վալալլոյ քաղեցին: Փինլանտիոյ

ճահիճի մը մէջէն կրանիտ քարի ան-
հետեւ զանգուած մը հանուեցաւ ու
լծակի մը ուժովը Ռեդրպուրկ բերուե-
ցաւ՝ Սեծին Պետրոսի արձանին խա-
րխիւ ըլլալու համար. ինչպէս նաեւ
Սուքսորի երկու կոթողներէն մէկն ալ
վերջի ատեններս Լազիպոսէն Ռարիզ
փոխադրելով Սիւքանուծեան հրա-
պարակին մէջ կանգնեցին :

Առողունք յիշելու ուրիշ օրինակներ
ալ, ասոնց ամէնը մէյմէկ մեծ ճար-
տարութիւններ են մարդկային հանձա-
րոյն, որ ամէն բան կը դիւրացնէ ու
ամէն բանի ճամբայ կը բանայ. բայց
ասոնցմէ աւելի զարմանալին այն է՝ որ
եղած են մարդիկ, որոնք ամբողջ շէնք
մը առանց ամենեւին փնասելու փոխա-
դրեր ու նոր հիման վրայ հաստատեր են.
ինչպէս Սոտոլփոս Յիորավանդէ հըռ-
չակաւոր մեքենագէտը Պոլոնեա քաղա-
քին մէջ տեղէ մը ուրիշ տեղ փոխա-
դրեց 65 ոտք բարձր ու 11 ոտք տրամա-
գիծ ունեցող աշտարակ մը. իրմէ զատ՝
(Յովսէփ Սէրրա ալ 1776 տարւոյն զան-
գակատուն մը քալեցուց Վրեշենդինոյի
մէջ, որ Վուրինէն քիչ հեռու քաղաք
մըն է : Լազիպոսի դիպուածներու նկա-
րագրութիւնը հետաքրքրական, միան-
գամայն և օգտակար ըլլալով՝ հոս Սէր-
րայի ըրած փոխադրութիւնը կ'ուզենք
մեր բանասէր ընթերցողացը ստորա-
գրել :

Սէրրա որմնագիր մըն էր, որ ոչ կար-
գալ գիտէր, ոչ գրել, և ոչ ձեռքով
բան մը քաշել. ասոր ականջը հասնե-
լով թէ կամք կայ Վրեշենդինոյի Սուրբ
Լստուածածին Պալատան ըստած մա-
տուռը մեծցընել, մէկէն հոնտեղի մե-
ծաւորին գնաց, որ Ռէրուձիա կ'ըսուէր,
և իրեն մտածածը թղթի վրայ քաշել
տուած՝ անոր ցուցուց. մտածածը այս
էր, որ մատրան վրայ գմբէթ մը գնէ՝
կոնակի կողմէն տեղ առնելով ներս ու
այնպէս մեծցընէ : Սեծաւորը հաւա-
նեցաւ. բայց Սէրրա այդ բանը կատա-
րելու համար՝ չէ թէ դժուարութիւն,
հապա մէկ մեծ արգելք մը ունէր առ-
ջեւ, որ ոչ ոք կրնար մտածել թէ կա-

րելի ըլլայ վերցընելը. վասն զի այն կող-
մէն ուսկից տեղ ներս պիտի առնէր ու
գմբէթը շինէր, հոնտեղը անմիջապէս
մատրան դէպ 'ի մէկ անկիւնը զանգա-
կատունը կեցած էր. և ուրիշ կերպով
կարելի չէր յաջողցընել բանը, բայց ե-
թէ վար կործանելով զանիկայ, որ 120
ոտք (39 մեդր) բարձրութիւն ունէր
ու իւրաքանչիւր երեսները 10 ոտք լայնք,
Բայց Սէրրայի խորհուրդը այն չէր,
հապա կ'ուզէր զանգակատունը տեղէն
վերցընել և քիչ մը ետևով քշել. ին-
քը այս բանիս հրամանը առած՝ ամբողջ
Վրեշենդինոյ քաղաքէն ձրի ուզածին
չափ ատաղձ ժողվեց, և 1775ին ձմեռը
բոլոր իր մտածած բանին պատրաստու-
թիւնները տեսաւ :

Եւ իսկ և առաջ զանգակատան ոտքին
չորս կողմէն գետինը փորեց ու հիմը
բացաւ. վերջը զանգակատան վարի
կողմէն չորս երեսները քանի մը բթա-
չափ վար առաւ և ամբողջ շէնքը չորս
անկիւններուն վրայ միայն կայնեցուց :
Վիչ մը վերով պատին ամէն մէկ ան-
կիւններուն գլխէն քիչ մը հեռու՝ եր-
կու կողմերուն վրայ հաւասար հեռա-
ւորութեամբ ծակեր բանալ տուաւ. և
այս ծակերէն դիմացէ դիմաց չորս մե-
ծամեծ ամուր գերաններ խոթեց, ու
րոնց ծայրերը քովի գետնին վրայ կ'եր-
թային կը կենային. որ երբոր անկիւն-
ներուն աղիւսները մէկդի առնուելու
ըլլային, զանգակատունը ամբողջ այս
գերաններուն վրայ միայն կը թընած
պիտի կենար : Եւ վանդականման
յատակին տակը իր բոլոր մտածած
մեքենաները մտցընելու համար, որ
շէնքը տեղէն շարժելու համար պէտք
էին, դէպ 'ի ուր որ զանգակատունը
առաջ պիտի քալեցնէր՝ այն կողմը եր-
կայն երկայն գերաններ ամուր իրա-
րու քով դնել տալով, հարթ և հաստաւ
տուն յատակ մը ձեւացուց՝ ծայրերը զան-
գակատան ոտքէն սկսած. և այս յա-
տակին վրայ հակառակ դրքով ուրիշ
կարգ մը գլաններ պառկեցուց. վերջը
ուրիշ տախտակամած մըն ալ շինել
տուաւ, որուն գերաններուն ուղղու-

Թիւնը ստորին տախտակամածին ուղղութեանը վրան էր, բայց անկէջ շատ աւելի կարճ. այս վերջինին վրայ անցընել պիտի տար այն չորս գերանները, որոնց վրայ, ինչպէս որ վերն ըսինք, բոլոր շէնքին ծանրութիւնը կեցած էր։ Բայց որպէս զի զանգակատունը ամէն շարժմունքէ ազատ պահէ, այս գերաններուն ութը ծայրերուն վրայ ութը յենարաններ անկէջ, որոնք զանգակատան բարձրութեանը ինչուան երկու երրորդ մասը կը հասնէին։

Բայ ամէն պատրաստութիւններն ընելէն ետեւ, ալ ուրիշ բան չէր մնար՝ բայց եթէ զանգակատան անկիւններուն գլխին թողուցած սիւները ուրագներով փշրել ու գետնէն բաժնել և ետքը անուորդներով՝ սկսիլ քաշել։ Բայնչափ ապահով էր Սէրրա այս բանիս յաջողելուն վրայ, որ իր անդրանիկ տղան զանգակատունը հանել տուաւ ու ապրտպրեց իրեն որ երբոր անուորդները դարձնելու սկսին՝ ամէն ուժովը զանգակները զարնէ։ Ուստիս Եգիպտոսի թագաւորն ալ ատենօք ասանկ ըրած էր. որ երբոր մեծ կոթող մը պիտի կանգնէր, որն որ հիմա հռոմ փոխադրուած է կ'ըսեն, իր որդին անոր ծայրը կապել տուաւ, որպէս զի գործաւորներն ու անոնց գլխաւորները կամ վախերնէն կամ գութերնէն ամէն զգուշութիւն ու խելք բանեցընեն գործողութեան ատեն։ Հիմա Սէրրայի գալով երբոր 1776 տարւոյն մարտի 26 եկաւ և քալելու նշանը տրուեցաւ, չուանները քաշելով բոլոր մեքենաները սկսան շարժիլ, և ժամ մը չքաշած՝ զանգակատունը իր նոր հիմանը վրայ հաստատուեցաւ. իսկ ժողովուրդը ամէն կողմանէ այս տեսարանին վազած՝ ծափաձայն աղաղակներով կը գովէր Սէրրայի ճարտարութիւնն ու հանձարը, որ իրաւցընէ ինչուան հիմա ալ զարմացընել կու տայ իրեն վրայ։ Բայնչափ որ այս դիպուածին ախանատես պատմիչը ամենեւին չըսեր թէ ինչպէս ար-

դեօք Սէրրա զանգակատունը տախտակամածէն հանել տուաւ ու իր տեղոյն վրայ հաստատեց։

ԴԻՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կերբեր։

Յունաց դիցաբանութեան մէջ Կերբեր ըսուածը ինչ էր։

— Կերբեր Տիփոնէ ու Լախտնէէն՝ ծնած կը սեպուէր, և դժոխքի դրան պահապան դրուած էր. 50 գլուխ ունէր, ինչպէս կ'ըսէ Լաիոդոս, իրեք որկոր ու վիշապի պոչ. վզին վրայ օձեր տնկուած կեցած էին, և իժի պէս ալ բերնէն սև թոյն մը կը թափէր. բայց ժամանակ անցնելով՝ հարիւրագլուխ ըսուեցաւ Կերբեր։ Երբեմն Լախտնի բերանը կը կենար, բայց ընդհանրապէս դժոխքին դրան դիմաց կը սպասէր, և իր խորին ու անդադար հաչիւններովը կը սարսափեցընէր այն հոգիներն որ անկէջ փախչելու յանգնէին և կամ կենդանի մարդիկներն որներս կ'ուզէին մտնել։ Կերբեր անողորմի ու հաւատարիմ՝ պահապան էր. բայց 'ի վերայ այսր ամենայնի հերմէս կրցաւ իրեն օձապատ գաւազանովը հանդարտեցընել զանիկայ, Որփէոս իրեն քնարին ձայնովը, և Դիփորէ Լանէասին առաջնորդը փոխնդով թմրեցուց. իսկ հերակլէս երբոր Բալետ արքայորդին դժոխքէն ազատելու գնաց՝ անձամբ պատերազմեցաւ անոր հետ, շղթայի զարկաւ ու հանեց դժոխքէն երկիր բերաւ, ոմանք լաեսալիա կ'ըսեն, այլք Լախտնիա և ոմանք ալ Սոնտոս։ Կերբեր այն ատեն գետնին վրայ եղած խտտերուն իրեն թոյնը հաղորդեց, զորոնք ետքը կախարդները իրենց դիւթութիւններուն կը ծառայեցընէին։

1 Եկիտնէ կէս կնիկ էր կէս օձ, և Տիփոնի հետ զուգակցելով ծնաւ զԿերբեր, Լեքնէան վիշապը, Պելերոփոնի Եղջերուաքաղը, Թերէի սփինքսը, Նեմեսայ առիւծը և ուրիշ շատ հրէշներ։